



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Քրեական նյութ ՇԻԴ N 0019/13/13թ.

Քրեական նյութ ՇԻԴ N 0019/13/13թ.

Նախագահող դատավոր՝ Հ.Գրիգորյան
Դատավորներ՝ Հ.Աբրահամյան
Կ.Սաղյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ

18 փետրվարի 2014թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝
վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր Վ.Հովսեփյանի
դատավորներ՝ Գ.Արզումանյանի
Ա.Հայրապետյանի

քարտուղարությամբ՝ Ա.Գրիգորյանի

քննելով տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու
վերաբերյալ ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 28-ի
որոշման դեմ դատապարտյալ Մհեր Սլավայի Արզումանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1.Դատավարական նախապատմությունը

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի /այսուհետ՝
Առաջին ատյանի դատարան/ 2013 թվականի հուլիսի 18-ի՝ օրինական ուժի մեջ
մտած դատավճռով Մհեր Սլավայի Արզումանյանը մեղավոր է ճանաչվել ԼՂՀ
քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածով /ծնողի կողմից երեխային պահելուց
չարամտորեն խուսափելը/ և նշանակվել է պատիժ՝ տուգանք 100.000/հարյուր
հազար/ ՀՀ դրամի չափով: Միաժամանակ, հաշվի առնելով, որ ամբաստանյալ Մ.
Արզումանյանի գույքային դրությունն անբավարար է ամբողջությամբ և
անհապաղ վճարելու տուգանքը, Առաջին ատյանի դատարանը նրան թույլատրել

է տասը ամսվա ընթացքում՝ յուրաքանչյուր ամիս 10.000 /տասը հազար/ ՀՀ դրամի չափով, վճարելու տուգանքը:

2013 թվականի նոյեմբերի 6-ին ԼՂՀ ոստիկանության քրեակատարողական վարչության քրեակատարողական տեսչությունը միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ դատապարտյալ Մ.Արզումանյանի նկատմամբ 2013 թվականի հուլիսի 18-ի դատավճռով նշանակված 100.000 ՀՀ դրամ տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ:

Դատարանի 2013 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ միջնորդությունը բավարարվել է. դատապարտյալ Մ.Արզումանյանի նկատմամբ դատավճռով սահմանված արտոնությունը ճանաչվել է ուժը կորցրած և նրա նկատմամբ նշանակված 100.000 ՀՀ դրամ տուգանքը փոխարինվել է 500 /հինգ հարյուր/ ժամ տևողությամբ հանրային աշխատանքներով:

2013 թվականի նոյեմբերի 27-ին դատապարտյալ Մ.Արզումանյանը վերաքննիչ բողոք է բերել ԼՂՀ վերաքննիչ դատարան /այսուհետ՝ Վերաքննիչ դատարան/ Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշումը բեկանելու խնդրանքով: Վերաքննիչ բողոքին կից Մ.Արզումանյանը ներկայացրել է նաև նշանակված տուգանքից 30.000 ՀՀ դրամն իր կողմից վճարելու վերաբերյալ անդորրագիր, իսկ մինչև վերաքննիչ բողոքի քննությունը Մ.Արզումանյանը մուծել է ևս 20.000 ՀՀ դրամ:

Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 28-ի որոշմամբ դատապարտյալ Մ.Արզումանյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 18-ի որոշումը բեկանվել է. ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հուլիսի 18-ի դատավճռով Մ.Արզումանյանի նկատմամբ սահմանված արտոնությունը ճանաչվել է ուժը կորցրած և նրա նկատմամբ նշանակված 100.000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ տուգանքի չվճարված մասը՝ 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամը, փոխարինվել է 270 /երկու հարյուր յոթանասուն/ ժամ տևողությամբ հանրային աշխատանքներով:

Նշված որոշման դեմ 2014 թվականի հունվարի 14-ին դատապարտյալ Մ.Արզումանյանը բերել է վճռաբեկ բողոք, որն ընդունվել է Գերագույն դատարանի վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

1/ Առաջին ատյանի դատարանը 2013 թվականի հուլիսի 18-ի դատավճռով, հաշվի առնելով, որ Մ.Արզումանյանի գույքային դրությունն անբավարար է ամբողջությամբ և անհապաղ վճարելու տուգանքը, նրան թույլատրել է տասը ամսվա ընթացքում՝ յուրաքանչյուր ամիս 10.000 /տասը հազար/ ՀՀ դրամի չափով, վճարելու տուգանքը /սահմանվել է արտոնություն/:

2/ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ բավարարվել է ԼՂՀ ոստիկանության քրեակատարողական վարչության քրեակատարողական տեսչության միջնորդությունը. դատապարտյալ Մ.Արզումանյանի նկատմամբ դատավճռով սահմանված արտոնությունը

ճանաչվել է ուժը կորցրած և նրա նկատմամբ նշանակված 100.000 ՀՀ դրամ տուգանքը փոխարինվել է 500 /հինգ հարյուր/ ժամ տևողությամբ հանրային աշխատանքներով:

2/ Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 28-ի որոշմամբ դատապարտյալ Մ. Արզումանյանի վերաբերյալ Առաջին աստիճանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 18-ի որոշումը բեկանվել է. դատավճռով Մ.Արզումանյանի նկատմամբ սահմանված արտոնությունը ճանաչվել է ուժը կորցրած և նրա նկատմամբ նշանակված 100.000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ տուգանքի չվճարված մասը՝ 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամը, փոխարինվել է 270 /երկու հարյուր յոթանասուն/ ժամ տևողությամբ հանրային աշխատանքներով:

3/ Վճռաբեկ բողոքին կից դատապարտյալ Մ.Արզումանյանը ներկայացրել է տուգանքի մնացած՝ 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամը մուծելու մասին անդորրագրեր:

3. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի և հիմնավորումների սահմաններում.

Բողոք բերած անձի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը դատավճռով նշանակված տուգանքի չվճարված 50.000 ՀՀ դրամ մասը փոխարինելով ավելի խիստ պատժատեսակ հանդիսացող հանրային աշխատանքներով, ինչը նախատեսված չէ իրեն մեղսագրված ԼՂՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի սանկցիայով, փաստորեն խստացրել է իր նկատմամբ նշանակված պատիժը: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ինքը ոչ թե չարամիտ խուսափել է տուգանքը վճարելուց, այլ աշխատանք չունենալու ու նյութական ծանր վիճակում գտնվելու պատճառով չի կարողացել ժամանակին և լրիվությամբ վճարել իր նկատմամբ, որպես պատիժ, նշանակված տուգանքի մի մասը: Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հանրային աշխատանքները կատարելն իր համար կառաջացնի ծանր հետևանքներ: Ըստ բողոքաբերի՝ իր նկատմամբ կայացված դատական ակտերը չեն բխում պատժի նպատակներից և հակասում են ԼՂՀ քրեական օրենսգրքում ամրագրված՝ արդարության և մարդասիրության սկզբունքներին:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 28-ի որոշումը, մանավանդ որ բողոքարկվող դատական ակտից հետո ինքն արդեն իսկ մուծել է տուգանքի մնացած մասը ու փաստորեն կրել է պատիժը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քրեական օրենսգրքի 47-րդ հոդվածի համաձայն՝ պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից ու ազատություններից օրենքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ: Պատժի նպատակն է

վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 50-րդ հոդվածի համաձայն՝ տուգանքը դրամական տուժանք է, որը նշանակվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար նույն օրենսգրքի հատուկ մասով նախատեսված դեպքերում և նույն օրենսգրքով նախատեսված սահմաններում՝ պատիժ նշանակելու պահին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից երեքհազարապատիկի չափով:

Դատապարտյալի նկատմամբ նշանակված տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու օրենսդրական կարգավորումները տրված են ԼՂՀ քրեական օրենսգրքի 50-րդ հոդվածով և ԼՂՀ քրեակատարողական օրենսգրքի 26-րդ հոդվածով:

Մասնավորապես, ԼՂՀ քրեական օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե դատապարտվողն ի վիճակի չէ անհապաղ և ամբողջությամբ վճարելու նշանակված տուգանքը, ապա դատարանը նրա համար վճարման ժամկետ է սահմանում առավելագույնը մեկ տարի ժամկետով կամ թույլատրում է տուգանքը մաս առ մաս վճարել նույն ժամկետում: Այդ դեպքում սահմանվում է տուգանքի վճարման ժամանակացույց, և որոշվում է յուրաքանչյուր անգամ վճարման ենթակա գումարի չափը: Նշված արտոնությունը դատարանի որոշմամբ ուժը կորցնում է, եթե դատապարտյալը խախտում է տուգանքի վճարման ժամանակացույցով սահմանված պարտավորությունների կատարումը: Դատապարտյալի կողմից տուգանքի վճարման ժամանակացույցով սահմանված պարտավորությունների կատարումը խախտելու դեպքում տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը փոխարինվում է հանրային աշխատանքներով՝ այդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տուգանքը վճարելու անհնարինության դեպքում դատարանը տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը փոխարինում է հանրային աշխատանքներով՝ հանրային աշխատանքների հինգ ժամը նվազագույն աշխատավարձի դիմաց: Եթե տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու համար կատարված հաշվարկի արդյունքում ստացվում է պակաս, քան երկու հարյուր յոթանասուն ժամը, ապա նշանակվում է երկու հարյուր յոթանասուն ժամ, իսկ եթե այն գերազանցում է երկու հազար երկու հարյուր ժամը, ապա նշանակվում է երկու հազար երկու հարյուր ժամ:

ԼՂՀ քրեակատարողական օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ տուգանքը չվճարելու դեպքում այն փոխարինվում է հանրային աշխատանքներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված ժամկետով և կարգով: Նշված հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ դատապարտյալի նկատմամբ դատավճռով նշանակված տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու նպատակով ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանումը միջնորդություն է ներկայացնում դատարան, իսկ 3-րդ մասի համաձայն՝ եթե տուգանքը վճարված է մասնակիորեն, ապա հանրային աշխատանքների ժամկետը որոշվում է՝ հաշվի առնելով, թե տուգանքի որ մասն է վճարված:

Այդպիսի միջնորդության քննարկման ընթացակարգը սահմանված է ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 453-րդ հոդվածով:

Վերոնշյալ իրավանորմերից հետևում է, որ տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու ինստիտուտն իրենից ներկայացնում է քրեական, քրեադատավարական և քրեակատարողական նորմերի համակարգված ամբողջություն, որը կոչված է օրենքով որոշված դեպքերում ու կարգով պատժի կատարման շրջանակներում ապահովելու հանցանքի կատարման մեջ մեղավոր ճանաչված անձի նկատմամբ դատական կարգով նշանակված պատժի փոխարինումը մեկ այլ՝ օրենքով նախատեսված համապատասխան պատժով: Պատժի փոխարինման անհրաժեշտությունը պայմանավորված է այնպիսի հանգամանքների առկայությամբ, որպիսիք խոչընդոտում են նախկինում նշանակված պատժի կատարմանը: Դրանով իսկ օրենսդիրը նպատակ է հետապնդում ապահովել դատարանի կողմից նշանակված պատժի կատարումը, իրացնել պատժի նպատակները:

Ինչպես հետևում է ներկայացված նյութերից, Առաջին աստյանի դատարանի 2013 թվականի հուլիսի 18-ի դատավճռով Մ. Արզումանյանը մեղավոր է ճանաչվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածով, որի սանկցիան նախատեսում է պատիժ՝ տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով և նշանակվել է տուգանք՝ 100.000 ՀՀ դրամի չափով: Միաժամանակ, հաշվի առնելով, որ Մ. Արզումանյանը <<չունի մշտական և կայուն եկամուտ, ինչպես նաև այն, որ նա յուրաքանչյուր ամիս պետք է վճարի 10000 դրամից ոչ պակաս ալիմենտ>>, այսինքն՝ նրա գույքային դրությունն անբավարար է ամբողջությամբ և անհապաղ վճարելու տուգանքը, Առաջին աստյանի դատարանը Մ. Արզումանյանին թույլատրել է տասը ամսվա ընթացքում՝ յուրաքանչյուր ամիս 10.000 /տասը հազար/ ՀՀ դրամի չափով, վճարելու տուգանքը /սահմանվել է արտոնություն/:

2013 թվականի նոյեմբերի 6-ին ԼՂՀ ոստիկանության քրեակատարողական վարչության քրեակատարողական տեսչությունը միջնորդություն է ներկայացրել Առաջին աստյանի դատարան՝ դատապարտյալ Մ.Արզումանյանի նկատմամբ դատավճռով նշանակված 100.000 ՀՀ դրամ տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ՝ հիմնավորելով նրանով, որ Մ.Արզումանյանը տուգանքի կամ դրա մասի վճարում ընդհանրապես չի կատարել: Դատապարտյալ Մ.Արզումանյանը դատական նիստում խնդրել է միջնորդությունը մերժել՝ հայտնելով, որ նոր է աշխատանքի մտել և պատրաստվում է 2013 թվականի դեկտեմբեր ամսում կատարել պարտավորությունները:

Առաջին աստյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ միջնորդությունը բավարարվել է. դատապարտյալ Մ.Արզումանյանի նկատմամբ դատավճռով սահմանված արտոնությունը ճանաչվել է ուժը կորցրած և նրա նկատմամբ նշանակված 100.000 ՀՀ դրամ տուգանքը փոխարինվել է 500 /հինգ հարյուր/ ժամ տևողությամբ հանրային աշխատանքներով:

Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով, որ դատապարտյալ Մ.Արզումանյանը պատիժն ամբողջությամբ չի կրել, այլ ըստ էության կրել է դրա մի մասը՝ դատավճռով նշանակված տուգանքի գումարից վճարելով ընդհանուրը 50.000 ՀՀ դրամ, հետևաբար՝ վերացել է նրա նկատմամբ դատավճռով նշանակված պատժի կրած 50.000 ՀՀ դրամի մասը հանրային աշխատանքներով

փոխարինելու անհրաժեշտությունը և հաստատված է դատապարտյալ Մ.Արզումանյանի նկատմամբ նշանակված տուգանքի չվճարված մասը՝ 50.000 ՀՀ դրամը, վճարելու անհնարինությունը, գտել է, որ այն պետք է փոխարինել 270 /երկու հարյուր յոթանասուն/ ժամ հանրային աշխատանքներով:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ մինչև բողոքարկվող որոշումն օրինական ուժի մեջ մտնելը դատապարտյալ Մ.Արզումանյանը վճարել է ևս 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ՝ փաստորեն ամբողջությամբ կրելով իր նկատմամբ Առաջին աստիճանի դատարանի 2013 թվականի հուլիսի 18-ի դատավճռով ԼՂՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածով տուգանքի ձևով նշանակված պատիժը:

Գերագույն դատարանը, հաշվի առնելով, որ արդեն իսկ ապահովվել է դատապարտյալ Մ.Արզումանյանի նկատմամբ դատավճռով նշանակված պատժի կատարումը և իրացվել պատժի նպատակները, գտնում է, որ Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 28-ի որոշումը պետք է բեկանել և տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ վարույթը կարճել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 436-րդ, 438-440-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Դատապարտյալ Մհեր Սլավայի Արզումանյանի վճարելի բողոքը բավարարել. ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 28-ի որոշումը բեկանել և տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ վարույթը կարճել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Գ.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

